## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## << ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Սիսիան քաղաքի <<Հիդրոշինարարների այգի>> հասցեում գտնվող 0.19հա հողամասը տարիների ընթացքում բաժանվել է առանձին միավորների և հատկացվել հասարակական կառուցապատման նպատակով: Արդյունքում գլխավոր հատակագծում առկա զբոսայգի համարվող տարածքի 0.6709հա հողամասը փաստացի կառուցապատված է հասարակական շենք-շինություններով, և ըստ էության չի ծառայում և չեր կարող ծառայել որպես զբոսայգի: Կարևորելով քաղաքի կենտրոնական հատվածում քաղաքաշինական տեսքի ապահովումը և համայնքի հողօգտագործման կարգավորումը, նպատակահարմար է գտնվել արդեն իսկ այգու կառուցապատված հատվածը ընդհանուր օգտագործման հողերից տեղափոխելու հասարակական կառուցապատման հողերի շարքը:

Ելնելով վերոգրյալից՝ կազմվել է հողաշինարարական գործ, որն էլ ներկայացվել է << քաղաքաշինության կոմիտեի քնարկմանը, որից հետո կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ տրվել է դրական կարծիք:

Հիդրոշինարարների այգի թիվ 3/10-3 հասցեում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը փոփոխվել է բնակավայրերի հասարակական կառուցապատման և վերագրանցվել է << կադաստրի կոմիտեի կողմից: Համաձայն Սիսիանի համայնքի ղեկավարի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 752-Ա որոշմամբ հողամասի կառուցապատման պայմանագրի դադարել է, ուստի անհրաժեշտ է հողամասն ու վրան կառուցված շինությունը նվիրել շինությունն կառուցած անձ՝ Լյուդմիլա Հայկի Գրիգորյանին:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ ՝

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
04.10.2019թ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## << ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի հաստատումից հետո, համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի, իսկ եկամտային մասում կկատարվի ավելացում:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ ՝

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
04.10.2019թ